

25. 767

ԲՆԱԿՄՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏԻՊԱՐԱՅԻՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

334

Կ-81

ՅԵՐԵՎԱՆ

ՄԻՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1 9 8 7

10 APR 2013

25.167

05 JAN 2010

334
5-81

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏԻՊԱՐԱՅԻՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1010
1010



ՅԵՐԲԱՂԱՐԱԿԿՈՈՊ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Ե
ՀԽՍՀ Կոմտնտոդկոմի տե-
ղակալ Մ ո վ ս ե ս յ ա ն
ՀԽՍՀ Արդտոդկոմ Ա. Հ ո վ-
ս ե փ յ ա ն
1937 թ. Մարտի 15-ին

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ԿՈ- ՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԻՊԱՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնակավարձկոռպի խնդիրն է՝ պահանջել, վերա-
կանգնել և տնտեսապես ոգտագործել պետական այն
բնակարանային ֆոնդը, վորը պետութայունից տրվում
է բնակավարձկոռպ կազմակերպված աշխատավոր բնակ-
չութանը:

Բաղաքի _____ փողոցի № _____

տնատիրութայան մեջ ապրող աշխատավորներն իրենց
հոժար կամքով կազմակերպում են բնակավարձկոռպ
ընկերութայուն հետևյալ նպատակներով:

ա. իրենց վարձած տնատիրութայան կոլեկտիվ
կառավարումը տնտեսավարկի սկզբունքով և ընկե-
րութայան անդամների ինքնագործունեյութայան զար-
գացումը:

բ. Բնակֆոնդի լիակատար պահպանումն ու վե-
րականգնումը:

գ. Տան կանոնավոր և տնտեսավար շահագոր-
ծումը, անդամների մասսայի պահանջների լավա-

գույն սպասարկումը, նրանց բնակարանային կեն-
ցադաշին պայմանների բարելավումը:

Դ. Բնակվարձկոռայ ընկերությունը կազմակեր-
պում է բնակվողների և ընկերության վարչության
կողմից պատասխանատվության սկզբունքով տան
դրության, նրա գույքի և դրամական միջոցների
նկատմամբ, նաև ամեն մի բնակելի շենք զբաղեց-
նողի անհատական պատասխանատվության հիմունք-
ներով նրա զբաղեցրած բնակտարածություն դրու-
թյան և պահպանության համար:

ԲՆԱԿՎԱՐՁԿՈՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՈՒ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2. Սկզբում բնակվարձկոռայը կազմակերպվում է
հիմնադիրների կողմից, վորոնք թիվը չի կարող պա-
կաս լինել լոթից: Այդ 7 անձը պետք է լինեն տնա-
տիրություն բնակելի շենքերի մշտական ոգտվող-
ներից և վայելեն ընտրական իրավունքներ:

Հիմնադիրները հրավիրվում են տնատիրության
բնակելի շենքերի բոլոր մշտապես ոգտվողներին կազ-
մակերպական ժողով և յեթե նրանց վոչ պակաս քան
50% -ը համաձայնություն կտա բնակվարձկոռայ կազ-
մակերպելու և կհաստատի սույն կանոնադրությունը,
այդ դեպքում այս կանոնադրությունը ներկայաց-
նում են ցերեանի բնակկոռայություն գրանցմանը:

3. Բնակվարձկոռայի անդամ կարող են ընդունվել
ընկերության տնատիրության մեջ մշտապես ապրող,
բնակարան իրավունքներ վայելող աշխատավորները:
Ժամանակավորապես ապրողները կարող են բնակ-

վարձկոռայի անդամ ընդունվել, յեթե այդ տանը լեր-
կու տարի տնընդհատ ապրած լինեն: Բնակվարձ-
կոռայի անդամ չեն կարող լինել այն անդամները,
վորոնք ներս են թողվել բնակության, հրավիրված
լինելով վորպես աշխատողներ կամ տնային սպասա-
վորուհիներ և բնակտարածություն են ստացել
աշխատանքային պայմանագրով նախատեսված
ժամանակամիջոցի համար:

4. Կոռպերատիվի անդամի ընդունելությունը կա-
տարում է վարչությունը, վորը նոր ընդունված ան-
դամների ցուցակը ներկայացնում է մոտակա ընդ-
հանուր ժողովի հաստատությունը:

Ձի կարելի բնակվարձկոռայի անդամ չընդունել
այն աշխատավորներին, վորոնք համապատասխանում
են այս կանոնադրության § 3-ի պահանջներին: Անդամ
ընդունվելու մերժումը, կամ անդամ ընդունելու մա-
սին արված հայտարարությունը մոտակա ընդհանուր
ժողովում չքննարկելը կարելի յե բողոքարկել դա-
տական կարգով:

5. Բնակվարձկոռայի ամեն մի անդամ իրավունք
ունի դուրս գալ ընկերության կազմից՝ հայտարա-
րություն տալով վարչությանը:

Ընկերության այն անդամները, վորոնք կորցրել
են ընտրական իրավունքները կամ վերջնականապես
հեռացել են բնակվարձկոռայի տնատիրությունից,
ընկերության կազմից հանվում են վարչության վո-
րոշմամբ:

6. Բնակվարձկոռայի այն անդամները, վորոնք չեն
յենթարկվում կանոնադրության, չեն կատարում դե-
պի բնակվարձկոռայն ունեցած իրենց պարտականու-

թյունները կամ գործում են շահերին հակառակ, սխառեմատիկորեն ուշացնում են բնակվարձը և տրնտեսության այլ պարտագիր վճարները, անտնտես ու անփուլթ են վերաբերվում բնակարանին, ընդհանուր ոգտագործման շենքերին, կամ բնակվարձկոտպի գույքին, նմանապես այն անձները, վորոնք խախտում են ներքին կարգի կանոնները և խանգարում են տաննապրողների նորմալ կյանքը, հանվում են անդամների կազմից ընդհանուր ժողովի վորոշմամբ և կաբող են հեռացվիլ տնատիրությունից դատարանով:

Բնակվարձկոտպի կազմից հեռացվածն այդ մասին կաբող և բողոքարկել դատական կաբող:

7. Բնակվարձկոտպի կազմից կամովին հեռացող կամ հեռացված անդամին վերադարձվում են բողոք փայավճարները. բնակվարձկոտպի կողմից դուրս դալու տարվա տնտեսական հաշվետվությունն ընդհանուր ժողովում հաստատվելուց անմիջապես հետո:

Փայավճարները վերադարձվում են, նրանցից դուրս գալով այդ անդամի պարտքերը՝ մինչ նրա դուրս գալու մոմենտը և բնակվարձկոտպի ունեցած վնասների այն մասը, վորն ընկնում և հեռացող անդամի վրա: Իսկ յեթե հեռացողն ավերել և բնակարանը կամ բնակվարձկոտպի գույքը, հանվում և նաև պատճառած վնասի արժեքը:

8. Յեթե բնակվարձկոտպից հեռացած անդամին իր դուրս գալուց հետո իր հանցանքով, Յ տարվա ընթացքում չի ստանում փայավճարները, սրանք անց են կացվում բնակվարձկոտպի հիմնական գումարներին:

3. ԲՆԱԿՎԱՐՁԿՈՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

9. Բնակվարձկոտպը, նրա ընկերության կանոնադրությունը բնակկոտպիության կողմից գրանցվելու պահից սկսած ոգտվում և իրավական անձի բողոք իրավունքներից և ունենում և իր կնիքը:

Բնակվարձկոտպն իրավունք ունի.

ա. Վարձել § 1-ում նշած տնատիրություններից նրանց բողոք բնակելի ու վոչ բնակելի կառուցվածքներով 12—25 տարի ժամանակով, նայած թե վորքան ծախս և պահանջվում հիմնական վերանորոգման համար:

Վարձակալության ժամկետը լրացնելուց հետո բնակվարձկոտպին և վերապահվում վարձման պայմանագիրը վերանորոգելու արտոնյալ իրավունքը:

բ. Վարձակալության ամբողջ ընթացքում ոգտվել տնատիրությանը պատկանող բակ ու պարտեզից և արգատ հողամասերից:

գ. Կատարել վարձած շենքի վերանորոգում-վերականգնումը, ավելացնել հարկեր, վարձած հողամասի վրա շինել նոր շենքեր կուլտուր-կենցաղային հաստատությունների համար:

դ. Վարկային հիմնարկություններից ստանալ նպատակային վարկեր՝ իր տնտեսական գործունեյությունն իրականացնելու համար:

յե. Չեռք բերել և պատրաստել ընկերության կարիքների և իր անդամների համար շինանյութեր, վառելիք և տնային ու բնակարանային սարքավորում:

դ. Կազմակերպել իր անդամների ու նրանց ընտանիքների անդամների համար ամեն տեսակի կուլտուր-կենցաղային ձեռնարկություններ՝ ճաշարաններ, լվացքատներ, վարսավիրանոցներ, մանկապատեզներ, մսուրներ, կարմիր անկոններ, նաև բանջարանոցներ, ախտահանման կաճեղաներ և այլն:

10. Բնակավարձկոռպն ու իր վարչությունը պարտավոր են.

ա. Վարել տնային տնտեսությունը լրիվ տնտեսաշարժի սկզբունքով, ապրողներից ժամանակին ու կանոնավոր կերպով դանձել բնակավարձն ու որենքով սահմանած այլ վճարները:

բ. Տնտեսությունը պահպանել տեխնիկական ու սանիտարական տեսակետից որինակելի դրություն մեջ, ճշտությունը կատարելով վարձակալական պայմանագրով իր վրա վերցրած պարտավորությունները պետություն հանդեպ:

գ. Ժամանակին ու լավ վորակով կատարել տնտեսություն վերանորոգումը, դրա համար ոգտագործելով իր ունեցած ներքին ռեսուրսները:

դ. Կազմակերպել կանոնավոր հոգատարություն դեպի բնակարանը, խնամել ու պահպանել վորպես սոցիալխատական սեփականությունը, տնային գույքը, ինվենտարն ու սարքավորումը:

լ. Ամեն կերպ բարելավել իր անդամների կենցաղային պայմանները՝ կազմակերպելով կուլտ-կենցաղային հաստատություններ, նպաստել անդամներին՝ ընդարձակելու իրենց բնակտարածությունը, ձեռք բերել վառելիք և շինանյութեր բնակարանները վերանորոգման համար և այլն:

զ. Կուլտուրական տեսքի բերել տնտեսությունը զակը—ազատ հողամասը, շինելով նրա վրա պարտեզներ, աչքիներ, ջերմոցներ և այլն:

ե. Տանն ապրող բոլոր աշխատողներին, մասնավորապես տան տնտեսուհիներին ներգրավել, վորպեսզի կազմակերպված մասնակցություն ունենան բնակավարձկոռպի կյանքում:

ը. Պայքարել հին կենցաղի արտահայտությունների դեմ,—խուլիգանություն, կովարարություն բնակարաններում, դեպի բնակարանն դիշատիչ վերաբերվելու, յերեխաներին առանց հսկողության թողնելու դեմ:

թ. Կազմակերպել ընկերական դատարաններ համաձայն նրանց մասին գոյություն ունեցող որենքներին:

4. ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱ ԲՆԱԿԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

11. Բնակավարձկոռպի տներում մշտական կենողների որինական կերպով զբաղեցրած բնակտարածությունը գտնվում է նրանց անժամկետ ոգտագործման ներքո:

12. Մեկուսացած բնակելի սենյակներն ազատվելու դեպքում (բացառությամբ գործող որենքներում նշած դեպքերի), նաև բնակավարձկոռպի կառուցած կամ բնակվելու համար վերասարքավորված շենքերը հատկացվում են բնակավարձկոռպի՝ բնակարանի կաթիք ունեցող անդամներին.

Ազատ սենյակների բաշխումը բնակավարձկոռպի

կարիքավոր անդամների վրա կատարում ե վարչու-
թյունը՝ ընդհանուր ժողովի վորոշման հիման վրա,
առաջնորդվելով գործող որենսդրությամբ ու բնակ-
կոցամիության կենտվարչության հրահանգներով:

13. Նկուղիները և ընդհանուր ոգտագործման շեն-
քերը, յեթե անցյալում բնակեցված են յեղել, ապա-
վելու դեպքում յենթակա չեն կրկին բնակեցման:

14. Բնակչինքերից ոգտվողները պատասխանատու
յեն այդ շենքերի դրության և լավ վիճակում պա-
հելու համար, վորպես պետական սոցիալիստական
սեփականության:

15. Ամեն մի առանձին զբաղեցնողին բնակարա-
նը հանձնվում ե մի ակտով, վորի մեջ նշվում են
բնակարանի դրությունը և նրա մեջ յեղած սարքա-
վորումը:

Բնակվարձկոռպի վարչությունը վոչ պակաս քան
տարին մեկ անգամ կատարում ե ստուգում հանրա-
յին գույքի դրության: Բնակվողի հանցանքով ա-
ռաջացած վատթարացման դեպքում նրանցից պա-
հանջվում ու գանձվում ե ամբողջ վնասը:

Սրանից անկախ տարվա՝ ընթացքում գոյացած
այն վնասվածքները, վորոնք առաջացել են բնակ-
տարածությունից և սարքավորումից անխնամ ոգտ-
վելու հետևանքով (վառարաններն անկանոն վառե-
լուց, ջրմուղի ու կոյուղի ցանցի կեղտոտելուց, ա-
պակիները ջարդելուց և այլն) ինչպես կանոն կարգի
յե բերվում այն բնակվողների հաշվին, վորոնց ան-
փույթ վերաբերմունքի հետևանք են այդ վնաս-
վածքները:

Բացի դրանից շենքը կամ բնակարանա-

յին ու տնային սարքավորումն ունեցած վնասարար
վերաբերմունքի համար հանցավորներին պետք ե
յենթարկել քրեյական պատասխանատվության:

5. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՊԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնակվարձկոռպի անդամները իրավունք ունեն.

ա. Բավարել բնակտարածությամբ տանն ա-
դատվող սենյակներից և բնակվարձկոռպի նոր կառու-
յած բնակֆոնդից:

բ. Պահանջել, վոր տնային վարչությունը բնա-
կարանների վերանորոգումներ կատարելիս առաջին
հերթին նորոգեն իրենց բնակարաններն, ապա այն
բնակվողների, վորոնք բնակվարձկոռպի անդամ չեն:
Սա չի վերաբերվում այն վերանորոգումներին, վորը
կանոնադրության § 18-ի համաձայն բնակվողների,
իրենց պարտականությունն ե:

գ. Բնակվարձկոռպից ստանալ տնտեսական ու
տեխնիկական ոգնություն բնակարանի վերանորոգ-
ման համար, նաև նյութեր, բնակարանային սար-
քավորումներ և վառելիք:

դ. Առնչություն ունենալ կենցաղային հիմնարկ-
ների կողմից սպասարկվելու տեսակետից:

16. Բնակվարձկոռպի անդամն իրավունք ունի
կատարել բնակարանի փոխանակում՝ փոխանցելով
իրենց պատկանող փայավճարներն ըստ գործող ո-
րենքի:

17. Բնակվարձկոռպի անդամի մահից հետո նրա
փայերն անցնում են նրա ժառանգներին:

18. Բնակվարձկոտայի անդամները պարտավոր են՝
ա. Բնակվարձկոտայի կազմի մեջ մտնելիս մուծել
մուտքի վճար..... ռուբ., վորը լինթակա չե վե-
րադարձման:

բ. Վճարել անդամակցական (վերադարձվելի) փաշ՝
որենքով և բնակկոտայմիության կենտվարչության
հրահանգներով սահմանված ու նշած ժամկետներում:

գ. Ժամանակին, առանց ուշացումների մուծել
զբաղեցրած բնակտարածության բոլոր վճարները և
ընդհանուր ժողովի կողմից կանոնադրության հիման
վրա վորոշված բնակվարձկոտային ֆոնդերը:

դ. Իր հաշվով և անհրաժեշտ ժամկետում կատա-
րել իր բնակարանի վերանորոգումը (սպիտակացնելը,
ներկելը, պատառումը, ապակիները գցելը, հատակ-
ների ու դռների ներկելը և այլն):

լե. Ակտիվ մասնակցութլուն ունենալ բնակվարձ-
կոտայի աշխատանքներում, նրա կառավարման, վե-
րահսկողության մարմիններում և ոժանդակող հանձ-
նաժողովներում:

6. ԲՆԱԿՎԱՐՁԿՈՒՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

19. Բնակվարձկոտայի միջոցները կազմում են՝
ա. Բնակվարձկոտայի անդամների—մուտքի, փա-
յական և նպատակալին մուծումներից:

բ. Բնակչներից ստացվող բնակվարձից, վարձա-
կալներից վոչ բնակելի շենքերի համար ստացվող վճար-
ներից, տնտեսության այլ պարտադիր վճարներից,
նաև բնակվարձկոտայի այլ յեկամուտներից:

Բնակվարձկոտայի միջոցները ծախսվում են խիստ

համաձայնեցրած բնակֆինալների հետ, վորը հաս-
տատվում է ընդհանուր ժողովի և այն բնակկոտայ-
միության կողմից, վորին անդամ է տվյալ բնակ-
վարձկոտայը:

Յուր ազատ դրամական միջոցները բնակվարձ-
կոտայը պահում է բանկում կամ խնայդրամարկղում՝
յուր ընթացիկ հաշվում: Ընթացիկ հաշվից գումար-
ների գուրս գրումը կատարվում է բացառապես վար-
չության հրամանով:

20. Բնակվարձկոտայի միջոցները ստորաբաժան-
վում են՝ հիմնական, փայական և հատուկ միջոց-
ների:

21. Հիմնական միջոցները կազմում են՝

ա. Մուտքի վճարներից, բ. ալլ մուտքերից, վո-
րոնք փոխանցվում են հիմնական միջոցներին՝ ընդ-
հանուր ժողովի վորոշմամբ:

Հիմնական միջոցները հատկացվում են բնակ-
վարձկոտայի կազմակերպման ժամանակ կատարվելիք
կազմակերպչական ծախսերը ծածկելու և այլն վնաս-
ները վճարելու համար, վորոնք կարող են առաջանալ
բնակվարձկոտայի ոպերացիաններից:

22. Փայագումարները կազմում են անդամներից
ստացվող փայավճարներից: Բնակվարձկոտայը պար-
տավոր է փայագումարների մի մասը փոխանցել
բնակմիությանը՝ համաձայն գործող որենսդրության
և բնակմիության կենտվարչության վորոշման:

Փայամիջոցների մնացորդը գտնվում է բնակ-
վարձկոտայի շրջանառության մեջ:

23. Յեւնեւով նրանից, վոր բնակվարձկոտայի բո-
լոր անդամները կոլեկտիվ պատասխանատվութլուն

են կրում տնատիրության անվնաս պահպանման համար, ընդհանուր ժողովն իրավունք ունի, հաստատված բնակֆինպլանի և կապիտալ վերանորոգումների նախահաշվի հիման վրա, կատարել նպատակային գանձումներ. բնակֆոնդի վերանորոգման և պահպանման (կապիտալ վերանորոգում) հետ կապված ծախսերը ծածկելու, նույնպես և բնակվողների կուլտուր-կենցաղային սպասարկման համար:

Նպատակային գանձումները բնակվարձկոտպի հատուկ միջոցներն են կազմում:

24. Յուր պարտավորությունների դիմաց բնակվարձկոտպը պատասխանատու չէ իր ամբողջ գույքով, այդ թվում նաև փայամիջոցներով:

Բացի այդ, բնակվարձկոտպի անդամները պարտավորությունների դիմաց պատասխանատու չեն իրենց փայավճարի հնգապատիկ չափով:

Բնակվարձկոտպի անդամների փայերից չի կարող գանձում կատարվել նրանց անձնական պարտքերի ու պարտավորությունների դիմաց, նաև նրանց ուղղված անվիճելի յեվ վարձական պահանջների դիմաց:

7. ԲՆԱԿՎԱՐՁԿՈՊԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

25. Բնակվարձկոտպի գործերը կառավարում են անդամների ընդհանուր ժողովը, իսկ ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում — ընդհանուր ժողովից ընտրված վարչությունը:

26. Ընդհանուր ժողովի բնակվարձկոտպի կառավարման բարձրագույն մարմինն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

27. Բնակվարձկոտպ ընկերության ժողովը տնորինում է հետևյալ հարցերը.

ա. Հաստատում է ընկերության գործունեություն տարեկան պլանը, յեվքի ու մուտքի նախահաշիվը և ֆինանսական պլանը:

բ. Հաստատում է տնատիրության վարձակալական պայմանագրերը:

գ. Հաստատում է վարչության տարեկան հաշվետվությունը՝ վերստուգիչ հանձնաժողովի պարտադիր յեզրակացությունը, նաև վարչության հաշվետվությունները կարևոր տնտեսական կամ պանիաների վերաբերյալ:

դ. Հաստատում է հատուկ միջոցներին հատկացվող մոնոմենտների չափերը:

յ. Սահմանում է բնակվարձկոտպի տներում ապաոված բնակտարածության բաշխման հերթականությունն անդամների միջև:

զ. Ընտրում է բնակվարձկոտպի վարչություն ու նրա նախագահին, նաև վերստուգիչ հանձնաժողով:

է. Ընտրում է ընկերական դատարանի անդամներին ու նախագահին:

ը. Հերթական ընդհանուր ժողովները հրավիրում են առնվազն, քան տարեկան յերկու անգամ: Արտակարգ ընդհանուր ժողովները հրավիրվում են բնակվարձկոտպի բոլոր անդամների 1/10-ի կամ վերահսկիչ հանձնաժողովի պահանջով, ինչպես նաև վարչության հրավերով:

Ընդհանուր ժողովին իրական է, յեթե ներկա յեն
բոլոր անդամների առնվազն 60⁰/₀-ը:

Յեթե անդամների անհրաժեշտ թվի ներկա չլինե-
լու պատճառով ընդհանուր ժողովը չի կայանում,
նշանակվում է նոր ընդհանուր ժողով միևնույն որա-
կարգով և վոչ շուտ քան հետևյալ որը: Այս յերկրորդ
ժողովը համարվում է որինական, քանի անդամն ել
վոր ներկա լինեն:

28. Ընդհանուր ժողովի վճիռներն ընդունվում են
ձայների մեծամասնությամբ, պարտադիր են բնակ-
վարձկոտյի բոլոր թե ներկա և թե բացակա անդամ-
ների համար:

Հետևյալ հարցերը վճռելիս պահանջվում է ներկա
գտնվող անդամների 2/3-ի համաձայնությունը:

ա. Ընկերության անդամին ընկերության կազ-
մից հանելու մասին:

բ. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի
անդամներին ժամանակից առաջ հեռացնելու մասին:

գ. Նպատակային գանձումներ սահմանելու և

դ. Բնակվարձկոտյը լուծարքի յենթարկելու մա-
սին:

29. Բնակվարձկոտյի գործերը վարելու համար
ընդհանուր ժողովն ընտրում է վարչություն 2
տարի ժամանակով 3—5 անդամ կազմով՝ նայած ըն-
կերության մեծությանը:

Վարչությունը բնակվարձկոտյի կատարողական
մարմինն է, իր աշխատանքի համար վարչությունը
հաշվետու յե ընկերության անդամների ընդհանուր
ժողովի առաջ:

30. Բնակվարձկոտյի և նրա ոժանդակ մարմին-

ների աշխատանքի ղեկավարման համար, նաև ընդ-
հանուր ժողովի ու վարչության վորոշումների կա-
տարման ստուգման համար ընդհանուր ժողովն ընտ-
րում է բնակվարձկոտյի նախագահ, վորը միաժա-
մանակ ճանաչվում է վորպես վարչության նախագահ:
Նախագահը վարչության ժողով է հրավիրում վոչ
պակաս քան ամիսը մեկ անգամ՝ ընթացիկ հարցեր
քննելու և համապատասխան վորոշումներ ընդունե-
լու համար:

31. Վարչության նախագահը և բնակվարձկոտյի
ամբողջ վարչությունը միասին լիակատար տնորենն
են բնակվարձկոտյի տնտեսության և միջոցների:

Բնակվարձկոտյի վարչության աշխատանքների
պլանների ոպերատիվ կատարումն այն տներում,
որ հնարավոր է, հանձնարարվում է վարչության
կողմից նշանակվող կառավարիչին, վորը գործում է
բնակվարձկոտյի վարչության կողմից հաստատված
խնդիրների սահմաններում միաձայն ղեկավարման
հիմունքներով և վորը աշխատանքի համար պատաս-
խանատու յե միմիայն վարչության առաջ:

Տանկառավարիչի պարտականությունների կա-
տարումն ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է
դրվել բնակվարձկոտյի ազատ նախագահի վրա:

32. Ընդհանուր ժողովը հարկ յեղած դեպքում
վարչությանն ողնելու համար ընտրում է սանիտա-
րական, վերանորոգման, ֆինանսական, կուլտ-կեն-
ցաղային և այլ ոժանդակ հանձնաժողովներ, վորոնց
կազմի մեջ կարող են մտնել բնակվարձկոտյի վոչ
անդամներն ել, յեթե միայն նրանք ընտրական իրա-
վունք ունեն:



33. Գուլքային պարապլորություններն ու դրամական գումարներ ստանալու պահանջագրերը պետք է ստորագրվեն վարչության նախագահի (կամ վարչությունից դրա համար լիազորված անձի) և բնակավարձկոտպի հաշվապահի կողմից: Այն բնակավարձկոտպներում, վորոնց հաշվապահությունը վարում է բնակվողների հաշվային գրասենյակը, դրամական գումարներ ստանալու պահանջագրերը պետք է ստորագրվեն նաև նույն այդ գրասենյակի հաշվապահի կողմից:

Վարչությունը պարտավոր է հաշվապահությունը տանել բնակվողների կենտրոնացման սահմանած ձևով ու կանոնով:

34. Վերստուգվի հանձնաժողովը ընտրվում է ընկերության անդամների ընդհանուր ժողովում 3—5 անձի կազմով և իր գործունեությունը համար հաշվետու յե ընդհանուր ժողովի առաջ:

Վերստուգիչ հանձնաժողովն ստուգում է վարչության ամբողջ տնտեսաֆինանսական գործունեությունը, վերանորոգումների և բնակֆինպլանների կատարումը, ստուգում է՝ արդյոք խնամքով է պահվում բնակավարձկոտպի գույքը, արդյոք չկան հափշտակումներ ու վատնումներ, կատարում է գանձարկի, գույքի, փաստագրերի և հաշվապահության ստուգումներ:

Վերստուգիչ հանձնաժողովն ստուգում է կատարում տարին չորս անգամ, իսկ վարչության գանձարկի հաշվետվությունը ստուգում է ամեն ամսին: Վարչության տարեկան հաշվետվության մասին վերստուգիչ հանձնաժողովն ընդհանուր ժողովին տալիս է իր յեզրակացությունը, վորն ընդհանուր ժողովն

լսում է վարչության հաշվետվությունից անմիջապես հետո:

Վերստուգման արձանագրությունը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:

35. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ ձիաժամանակ չեն կարող մտնել միևնույն ընտանիքի պատկանող անձեր:

36 Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները կրում են համապարտ պատասխանատվություն այն վնասների համար, վոր պատճառել են բնակավարձկոտպին իրենց անկանոն գործողություններով:

37. Վարչությունն իրավունք չունի կատարելով վորևէ կազմակերպության կամ հիմնարկության կարգադրությունը բնակավարձկոտպի բնակտարածության բնակեցման կամ նրա կուլտուր-կենցաղային հիմնարկների ոգտագործման մասին, յեթե այդ կարգադրությունը խախտում է կառավարության՝ բնակկոտպեցիայի մասին տված վորոշումը ու այս կանոնադրությունը:

Այդպիսի կարգադրությունը կատարելու համար վարչության անդամներն ու բնակավարձկոտպի պաշտոնակատար անձինք չենթակա չեն քրեական պատասխանատվության:

38. Բնակավարձկոտպի վարչության և վերահսկողության մարմինների (ընդհանուր ժողովի, վերստուգիչ հանձնաժողովի) անկանոն գործողությունների մասին գանգատներ ներկայացվում են այն բնակվողներին, վորի մեջ տվյալ բնակավարձկոտպն է մտնում:

Իսկ գանգատներն այն գործողութիւններն զեմ,
վորոնք խախտում են անդամների քաղաքացիական
իրավունքները (բնակտարածութեան խլում, ավե-
լորդք բնակվարձի գանձում և այլն) տրվում է դատա-
կան մարմիններին:

Ք. ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԿՄԻՈՒԹՅԱՆ, ԿՈ- ՍՈՒՆԱԼ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ԲՆԱԿՎԱՐՁԿՈՈՊ- ՆԵՐԻ ՇԵՏ

39. Բնակվարձկոռպն անդամ է.....
բնակկոռպմիութեան և իր աշ-
խատանքը տանում է նրա անմիջապես ղեկավարու-
թեամբ: Բնակմիութեան ցուցմունքները ու վորոշում-
ները պարտադիր են բնակվարձկոռպի համար:

Բնակմիութեան իրավունք ունի չհաստատելու
ընդհանուր ժողովի կամ վարչութեան այն վորոշում-
ները, վորոնք խախտում են որենսդրութեան կամ
բնակկոռպերացիայի կանոնադրութեանը, այս դեպ-
քում բնակմիութեանն է առաջարկում վերանայել
այդպիսի վորոշումները:

40. Բնակվարձկոռպի փոխարարներութեանները
տեղական կոմունալ մարմինների հետ վորոշվում են
նրանց միջև կապված վարձակալական պայմա-
նագրով:

Կոմունալ տնտեսութեան մարմինները ղիտում ու
հսկում են, թե ընկերութեան ինչպե՞ս է կատարում
պայմանագրով իր վրա վերցրած պարտավորութեան-
ները կանոնավոր շահագործման և բնակֆոնդի պահ-
պանման տեսակետից, բայց իրավունք չունեն մի-

ամտելու բնակվարձկոռպի ոպերատիվ գործունե-
յութեանը:

Վարձակալական պայմանագրի ժամկետից առաջ
լուծումը կարող է տեղի ունենալ վոչ ալ կերպ,
քան պետարբիտրաժի վորոշմամբ:

41. Կուլտ-կենցաղային հիմնարկներ կառուցելու,
մերձքաղաքային տնտեսութեան կազմակերպելու,
հաշվապահութեանը տանելու համար և այլն՝ մեկ
բնակվարձկոռպի վարչութեանը կարող է համաձայ-
նութեան գալ մի այլ բնակվարձկոռպի հետ:

Այդպիսի բնակվարձկոռպների փոխարարներու-
թեանները միասնական աշխատանքի և նրանից ա-
մեն մեկի նույնական մասնակցութեան վերաբերյալ
վորոշվում է նրանց մեջ կնքված պայմանագրով:

9. ԲՆԱԿՎԱՐՁԿՈՈՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

42. Բնակվարձկոռպը դադարեցնում է իր գործու-
նելութեանը հետեյալ դեպքերում.

ա. Յերբ անդամների թիվը պակասում է որենսդրով
սահմանված նորմայից.

բ. Յերբ բնակվարձկոռպը դատական վորոշմամբ
ձանաչվելու է սնանկ:

գ. Յերբ բնակվարձկոռպը համապատասխան խոր-
հրդի կողմից ձանաչվում է կանոնադրութեան մեջ
նշված նպատակից շեղված կամ պետական շահերին
հակառակ գնացած:

դ. Յերբ բնակվարձկոռպը բնակկոռպմիութեան

կողմից ճանաչվում ե կեղծ կոոպերատիվ կամ աըն-
տեսապես վոչ կենսունակ կազմակերպություն:

յե. Յերբ բնակվարձկոոպի անդամների ընդհանուր
ժողովն անհրաժեշտ ե գտնում ընկերության լու-
ծարքը:

զ. Յերբ կոմունալ մարմնի հետ կնքած վարձա-
կալական պայմանագրերը լուծվում են:

Բնակվարձկոոպի գործերի լուծարքումը կատարվում
ե կոոպերատիվ կազմակերպությունների լուծարքի
կարգի մասին գոյություն ունեցող որենքների հա-
մաձայն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0210195

255

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ